

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ջրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1453.6 հազ. մարդ, որոնց 88.2 տոկոսը կամ 1282.8 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 11.8 տոկոսը կամ 170.8 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) կայուն կերպով չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 37.0 տոկոսի կամ 474.0 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9 հազար սուբյեկտներից ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2000թ. նոյեմբերին նշված սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 7.5 տոկոսով: Այս սուբյեկտներում զբաղված բնակչության 44.0 տոկոսը զբաղված է եղել սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցիալական ապահովություն, կրթություն, մշակույթ, արվեստ), 27.2 տոկոսը՝ արդյունաբերության մեջ, 6.9 տոկոսը՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.6 տոկոսը՝ շինարարության մեջ, 3.2 տոկոսը՝ բնակարանային կոնոմալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 5.8 տոկոսը կառավարման համակարգում և 8.3 տոկոսը՝ այլ ճյուղերում:

2000թ. նոյեմբերի վերջին ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 180.6 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.1 տոկոսը կամ 179.0 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 86.9 տոկոսը կամ 155.6 հազ. մարդ:

2000թ. նոյեմբերին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 1.9 հազ. մարդ, որոնցից 1.5 հազարը կամ 78.9 տոկոսը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.9 հազ. մարդ, որոնցից՝ 20.5 տոկոսը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2000թ. նոյեմբերին *

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		Նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ
Ընդամենը	180.6	89.9	155.6	89.4
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	2.3	76.7	1.7	77.3
Արարատ	8.6	87.8	6.9	92.0
Արմավիր	12.7	81.9	10.0	80.0
Գեղարքունիք	11.1	91.0	7.9	87.8
Լոռի	24.5	88.1	21.3	84.5
Կոտայք	15.7	84.9	12.2	83.0
Շիրակ	33.2	93.8	29.4	91.3
Սյունիք	15.5	102.0	13.5	101.5
Վայոց Ձոր	2.1	87.5	1.8	90.0
Տավուշ	5.4	87.1	4.8	88.9
Երևան	49.5	90.0	46.1	92.2

**) ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով*

Գործազուրկ բնակչության 94.9 տոկոսը կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 29.6 տոկոսը՝ Երևան, 17.2 տոկոսը՝ Գյումրի և 8.1 տոկոսը՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 64.5 տոկոսը: Նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում մնացել է նույն մակարդակի վրա:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2000թ. նոյեմբերին կազմել է 615 մարդ. այդ թվում՝ 60.5 տոկոսը կամ 372-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2000թ. նոյեմբերին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 807 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 294 մարդ (աշխատանք փնտրող):

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2000թ. նոյեմբերին կազմել է 12.3 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3156 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2000թ. նոյեմբերին կազմել է 11.0 տոկոս և նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 0.1, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 0.5 տոկոսային կետով: